ԱԿԱՆՋԴ ԲԵՐ՝ ԱՍԵՄ...

Առաջադրանքներ

1. Գրի՛ր համանունների զույգեր, որոնց մի բաղադրիչը լինի հատուկ անուն:

Նմուշ՝ Համեստ–համեստ, Ազատ–ազատ:

2. Գրի՛ր համանունների զույգ, որի մի բաղադրիչը լինի ածանց:

3. Լրացրո՛ւ աղյուսակը՝ դեմ դիմաց գրելով տրված բառերի հոմանիշները:

Կապույտ, *ագահ*, *արեգակ*, *հավաքել*, *մաքուր*, *քամի*, *գույն*, *խումբ*, *մազ*:

Ձի	նժույգ	զամբիկ	հովատակ	աշխետ

4. Փակագծում տրված համանուն բառերը համապատասխանաբար տեղադրի՛ր նախադասությունների բաց թողնված տեղերում՝ ենթարկելով պահանջվող ձևափոխության:

ա) Խորամանկ և հեռատես պարսից _____ ամեն գնով ջանում էր պաշտպանել իր երկրի _____:

բ) Ավտոմեքենայի անիվի _____ անսպասելի պայթեց, և _____ ու սարսուռ պատեց ուղևորներին:

գ) Ջրվորը պրկեց իր ջլապինդ _____ և հողից թափով դուրս քաշեց մի խոշոր _____ :

(դող–դող, բազուկ–բազուկ, շահ–շահ)